

2001
ամառ

ԲԱՐԻ ԵՐԹ

Արդեն մեծ եմ ես,
Դպրոց եմ գալիս,
Գիտեմ Մաշտոցին,
Հայկ նահապետին:
Դռներդ բացի՛ր,
Դպրոց բաղձալի,
Ղողանջի՛ր դու զանգ,
Այդ ես եմ գալիս...



Այս համարը
նվիրվում է առաջին
դասարանցիներին

Երևանի «Մխիթար Գոշ» միջազգային համալսարանի և Օհանյանի
«Ավան» կրթահամալիրի հանդես
Հրատարակվում է 2001թ. ապրիլից (N 2)

ՎԱՐՈՒԺԱՆ

21-րդ դարի առաջին ուսումնական տարվա

ՄԵՐ ՄԻՐԵԼԻ ԱՌԱՋԻՆ ԴԱՍԱՐԱՆՑԻՆԵՐ

ԲԱԳՐԱՏՈՒՆԻ ԱՇՈՏ և ԴԱՎԻԹ
ՍՈՒՔԻԱՍՅԱՆ ՀԱՍՄԻԿ և ԳԱՌՆԻԿ

ԱՄԻՐՅԱՆ ՍԵՐՁԵՅ
ԽԱՉԱՏՐՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ
ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ ԱՍՔԱՆԱԶ
ԲԱՐՍԵՂՅԱՆ ԱՆԺԵԼԻԿԱ

ՄԱՍԲՐԵՅԱՆ ԷՄԻԼ
ԱՎԱԳՅԱՆ ԴԱՎԻԹ
ՀԱՆՆԻՅԱՆ ՎԱՐԻՆԵ
ԶԻՐՈՅԱՆ ՍԵՐՁԵՅ

ԷԳՆԱՏՈՍՅԱՆ ԼԱՌԻՐԱ
ՔՍՊՈՅԱՆ ՕՎՍԱՆՆԱ
ՊԱՊՅԱՆ ՄԱՐԻԱՄ
ԲԱՎԻԿՅԱՆ ԷՄՄԱ

ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԵՎԱ
ԲԱՐՈՅԱՆ ԱՐԱՐԱՏ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԳԱԳԻԿ
ԱՎԱԳՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՋԵՐՍՈՐԵՆ ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ ԵՆՔ
ԴՊՐՈՑ ԸՆԴՊԻՆՎԵԼՈՒ ԱՌԹԻՎ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ
ՍԱՐԳՍՅԱՆ ՍՅՈՒԶԱՆՆԱ
ՀՈՒՆԱՆՅԱՆ ԱՐԵՎԻԿ
ԱՌԱՔԵԼՅԱՆ ԼԻԼԻԹ

ԲԱՂԴԱԱՍՐՅԱՆ ԷԴՎԱՐԴ
ՄԽԻԹԱՐՅԱՆ ՆԱՐԵԿ
ՄԿՐՏՈՒՄՅԱՆ ԱՐԵԳ
ԴԱԼԼԱՔՅԱՆ ՎԱՀԵ

Կրթահամալիրի հիմնադիրների խորհուրդ, տնօրինություն, մանկավարժական խորհուրդ, Վարուժան Կարապետյանի անվան վարժարանական խորհուրդ

Վարուժան Կարապետյան... Ապրիլի 23..

Լեզվենդ դարձած հայրողին վերադարձել է հայրենիք: Գարնանաբույր ու ծաղկածիծաղ Երևանը դիմավորում է հայ քաջորդուն: Վարուժան Կարապետյանը ոտք է դնում հայոց հողին ու քաջակամչում՝ վերջապես...

Վերջապես, որովհետև 17 տարվա բանտային երկար ու ծիգ տարիներից հետո ոտք է դնում հայոց հողին: Բանտել էին միշտ բռնիքի պատրաստ հայրորդուն նջգիկապես, բայց նրա ոգու ճախրը միշտ ազատ է եղել, միշտ սավառնել է հայոց աշխարհում՝ ուսումնասիրելով իր ժողովրդի պատմությունն ու ճարտարապետական հնությունները, զբաղվել փայտափորագրությամբ: Իսկ այսօր նա հայոց ոստանում է փորորկվում են սրտերը, ախեկոծվում են հոգիները, առասպել դարձած հայրողին որպես կենդանի կերպար, կանգնած է իր ժողովրդի առջև: Կանգնած է և՛ հայաբառ, և՛ համեստ, և՛ գուսպ, և ինչպես ինքն է ասում «Ավան» կրթահամալիրի սաների հետ հանդիպման ժամանակ. «Իմ արածս հերոսություն չէ, ես իմ պարտքս կատարեցի, ամեն հայ էլ պետք է այդպես վարվեր»: Նրա համեստ արտասանած խոսքերը հուզում են հայ պատանիներին ու աղջիկներին, ոգևորում, տոգորում հայրենասիրական շնչով, քսնով Վարուժան Կարապետյանի սրտաբերած ամեն մի խոսքը, ամեն մի բառը ուղղված «Վերջին զանգի» ավարտական հանդեսի շրջանավարտներին, պատգամ էր, կյանքի դժվարություններին դիմագրավելու կորով, չէ՛ որ նրա մտքերն ու պատգամները բունության քորայով են անցել կարծրանալով, կոփվելով ու կյանքի ուղի նտնելով:

«Ավան» կրթահամալիրի Վարուժան Կարապետյանի անվան վարժարանական խորհրդի սաներն ակնապիշ զարմանքով ու հիացմունքով էին նայում նրան՝ զարմանալով, որ սովորական արտաքինով մի այր է նա՝ օժտված մարդկային ամենավեհ և ամենամեծ հայի հատկանիշներով: Երևի այդ պահին յուրաքանչյուրը մտածում էր, որ ինքն էլ կարող է որևէ հերոսական արարք կատարել, չէ՛ որ կենդանի հերոսը որպես սովորական մարդ, համեստորեն կանգնած է իրենց առջև, չէ՛ որ նա իր հետ է միշտ ունեցել մեր հերոս նախնիների հայրենասիրական պատվիրանները՝ սկսած Հայկ Նահապետից մինչև Վարդան Մամիկոնյան,

Գավիր-Բեկ և Գարեգին Նժդեհ, մինչև նրանց մարտական սխրանքներն ու փառապանծ հաղթանակները: Երևի Վարուժան Կարապետյանի բանտային 17 տարիները ուղեկցվել են Գարեգին Նժդեհի պատվիրանով՝ «Ի՞նչ երջանկություն, մեռնել այն երավատ հավատքով, որ քո անյունից շանթանման հերոսներ պիտի ծնվեն»: Բայց հայ քաջորդին հերոսաբար տարավ բանտային 17 երկար ու ծիգ տարիները և հաղթեց մահին, չարին, և այն պահին, երբ Փարիզից Երևան բոշող ինքնաթիռը վայրէջք էր կատարում «Ջվարթնոց» օդանավակայանում և տարագիր հայրողին ոտք է դնում հայոց հողին, «Մխիթար Գոշ» համալսարանում նշվում էր Գարեգին Նժդեհի ծննդյան 115-ամյակը, իսկ կրթչախի սաները սրբորեն արտասանում էին արցախյան նահատակ հերոսամարտիկների անունները՝ Մոնթե Մելրոնյան, Մովսես Գորգիսյան... Թաքով Կրպոյան...

Իսկ հետո՞... Վերադարձից մի քանի օր անց Վարուժան Կարապետյանը կլեանգի Չարենցի կամարի մոտ, գրոխ կխոնարհի նրա հիշատակի առջև, կհայի Չարենցի այնքան սիրած Մասիսներին և կբացակասի):

- Այսքան մեծ հորիզոն դեռևս տեսած չեմ: Այո՛, հայրենակարոտ զավակի համար հայրենիքի հորիզոնները մեծ են:

Իսկ լրագրողների այն հարցին, թե ինչպես տեսավ Հայաստանը, Վարուժան Կարապետյանը պատասխանատւ է.

- Մի՛թե սիրակարոտ զավակը, երբ իր մորը տեսնում է անզան ցնցոտիների մեջ, նկատու՞մ է նրա այդ հանդերձները: Այսօր ես գտել եմ իմ մորը՝ իմ մայր: Հայաստանը, և այն ինձ հարազատ ու սիրելի է, ինչպիսին էլ որ լինի:

Իր հարնենիքում վարուժան Կարապետյանը ստացավ 10-րդ դասարանի վկայական, իսկ «Մխիթար Գոշ» համալսարանը 2001 ուստարում իր դոկերը կրացի ազգասեր ու անձնանվեր հայի համար:

Սիրելի՛ ընթերցող, շարունակվում է մեր հանդեսի ամառային երթը այժմ արդեն Լեոնահայաստանի արժիվ Գարեգին Նժդեհի մասին պատմող նյութերով



Հայոց աշխարհում 1991 թվականը հայտարարված է Նժդեհի տարի: Հայաստանի գրեթե բոլոր կրթօջախներում, գիտական հիմնարկներում, մշակութային օջախներում շարունակվում են նշել մեծ հայրենասերի ծննդյան 115-ամյակը:

Այդ միջոցառումներին անմասն չեն մնացել «Ավան Կրթահամալիրն» ու «Մխիթար Գոշ» համալսարանը: Այժմ մեր նվիրումը հայ ժողովրդի անվեհեր զավակ Գարեգին Նժդեհի մասին շարունակվում ենք «Վարուժան» հանդեսի միջոցով:

ԳԱՐԵԳԻՆ ՆՇԴԵԴ

1886 թվականի հունվարին Նախիջևանի Կզնուք գյուղում մի մանուկ ծնվեց: Եվ չնայած հունվար էր, ցուրտ ու սառնամանիք, բայց Տիրուհի և Եղիշև Տեր Հարությունյանների օջախում խնդություն էր ցնծություն: Ծնվել էր նրանց չորրորդ զավակը, որ հետո պիտի դառնար աննկուն մարտիկ, ահ ու սարսափ հանդիսանար Չանգեզուրը օղակող թշնամու համար, նվիրվեր իր ազգի ազատագրական պայքարի վեհ գործին: Ի՞նչ իմանային նրա աստվածաձախ ծնողները, որ շատ տարիներ հետո իրենց կրտսեր զավակը, որին մանկուց օրոր է ասել Մայր Արաքս, և անուշ ստափյունով փայփայել հայոց բարդին, օրերից մի օր պիտի դառնա Լեոնահայաստանի սպարապետ և կազմակերպի նրա ինքնապաշտպանության գործը: Իսկ երբ Նժդեհի գլխի համար 11-րդ բանակի հրամանատարությունը խոստանում է 3 միլիոն ռուբլի և նրա դեմ ուղարկում Կոտոչկինի հեծյալ զորախումբը, քաջարի հայրդին իբրև Խուստուփի արժիվ, իրեն ապավինում է հարազատ լեռանը՝ Պրոմեթեոսի նման պահելով ազատության կայծը: Եվ հանկարծակի իջնում է այդ բարձունքից ու հրդեհում ողջ Սյունիքը ազատության բոցով: Խուստուփի արժիվը բռնում է Գորիս, բշնամին ջախջախվում է, իսկ Չավալ փաշան գերի է ընկնում:

1920 թվականի դեկտեմբերին Սյունիքը իրեն հռչակում է ինքնավար:

Շուտով Նուրիջանովի ստորագրությամբ հեռագիր է ստանում. «Շտապ ընդունեք խորհրդային դրոշը և միացեք Ադրբեջանին»:

Մի՞թե լեռնային արժիվը, որ կրծքով ու սրտի զարկերով էր պահպանել Սյունիքը, հանգիստ կհանձնեք այն: Ոչ: Անա ինչ է պատասխանում Նժդեհը.

-Երբե՛ք: Նախընտրում եմ վիրավոր մնալ Սյունիքում, մենակ չթողնել լեռնահայրյանը, իսկ եթե մեռնել, միայն իմ սյունեցիների հետ: Հանուն իմ հեղափոխական հավատամքի եղել եմ բոլոր բանտերում Արաքսից մինչև Պետերբուրգ, երեք տարի շրթաներ եմ մաշել, կովել եմ, կովելու եմ բռնության դեմ, ինչ քողի տակ և ինչ գույնի էլ այն երևան գա: Կովել եմ Պարսկաստանում, Մակեդոնիայում, Բալկաններում, կովում եմ և այսօր:

Ու վերջին անգամ զարկում է Սյունիքը, և Նժդեհի ուժերը հաղթում են բոլոր ճակատներում:

1921 թվականի գարունն է:

Եռագույնը ծածանվում է Լեոնահայաստանի վրա: Այդ օրը Սյունիքը իր ուժի, փառքի մեծության մեջ էր: Նա հպարտ էր, որովհետև պարտության էր մատնել Ադրբեջանին, ջարդել բուրբերին, զինաքափել բոլշևիկյան 11-րդ զորաբանակը:

Նա հպարտ էր, որովհետև հերոսաբայ հետ էր մղել դեպի հայ մտավորականությունը երկարող մահաբեր կացինը:

Սյունիքը հաղթեց, որովհետև ուներ թշնամուն գերեզման խոր ձորեր, իրեն ապաստան բարձր լեռներ և ծով սեր դեպի հայրենիքը, գրանիտե հավատ, որ ապստամբած ժողովրդին միայն Աստված կարող է հաղթել:

Սյունեցին և նրանց քաջաց քաջ զորավարը խորապես գիտակցում էին, որ Հայաստանը առանց իր աշխարհագրական ողնաշարի չի կարող գոյություն ունենալ: Իսկ հաշտվել Սյունիքում ապաս-

տանամ տարագրության կորստի հետ, կնշանակի հաշտվել հայ ժողովրդի չգոյության հետ, կնշանակի հայ ժողովրդի բախտն ընդմիշտ հանձնել իսլամ հարեաններին: Աշխարհից կտրված լեռնաշխարհում, երբ հայ քաջորդին համոզվում է, որ Ջանգեզուրը Հայաստանի անբաժան մասն է, մեջքը կանուրջ է դարձնում և կազմակերպում Լեռնահայաստանում ապաստանած մտավորականության անցումը դեպի տարրեր հորիզոններ:

Եվ անցավ ու փրկվեց Արարատյան մտավորականությունը, ուսանողությունը, սպայությունը:

Աշխարհից կտրված այդ լեռնաշխարհում, երբ կոփողներին կպակասեր ռազմամթերքը, երբ ամենուրեք բափառում էր սով-արբան, երբ դիրքապահ վաշտերին կպակասեր չոր հացն անգամ, այունեցին չրեց իր վահանը, և դրա շնորհիվ այսօր կապրի Արարատյան մտավորականությունը:

1921 թվական, հունիսի 10-ը: Չնայած անատ էր, և երկնքից ոսկեղեն հուր էր բափվում, բայց Լեռնահայաստանը մրամած էր ու տխուր: Լեռները Խուստուփի գլխավորությամբ, խոնարհել էին իրենց գազաբները և կարոտակեզ հայացքներով հրաժեշտ էին տալիս լեռնային դյուցազունին: Նրանց անսասան ոգին գգում էր, որ այլևս չեն տեսնելու իրենց գլխավերևում ճախրող արծվին:

Աստանդական ցուպը ձեռքին, հայրենիքի անսահման կարոտն ու սերը սրտում նա հեռացավ:

Եվ ինչ տարավ նա իր հետ:

1. Արարսի հայկական ափում զինվորների կողմից զարկված վագրի մորթին իր միակ վարձատրությունը:
2. Ջավալ փաշայի դաշույնը՝ իր միակ պատերազմական ավարը:
3. Երբեք պարտություն չտեսած Սյունյաց դրոշը:
4. Հայկական քառարանը իր միակ մխիթարիչը տարագրության մեջ:

Տարագրություն

Բուդղարիա... Մոֆիա...

Այստեղ է հանգրվանել Սյունիքի լեռնային արծիվը:

5

1944 թվականի սեպտեմբերին խորհրդային զորքերը մտնում են Բուդղարիա: Շուտով ձերբակալվում է «Մմերչ» բանակային հակահետախուզական գլխավոր վարչության աշխատակիցների կողմից և տեղափոխվում Մոսկվա: Հետո 25 տարվա ազատազրկում:

Բանտեցին Սյունյաց արևին, բանտեցին միշտ քոչչքի պատրաստ արծվին: Մի՞թե իր հոգում այնքան արև ունեցող արծվին կարող են բանտել: Իսկ ոգին, գաղափարը ինչպե՞ս պիտի բանտեն: Ո՞ր դուրս սավառնեցին հայոց արծվաբն քաջորդու գաղափարները, սասանեցին, փշրեցին բռնության շղթաները և դարձան ամեն մի հայրենասեր հայի հոգևոր սնունդը:

Վերադարձ հայրենիք

«Երբ ինձ սպանված տեսնես, դիակս քաղիք Խուստուփի ամենաբարձր կատարին, որ ինձ երևան և՛ Կապանը, և՛ Գինոսպը, և՛ Գողթանը, և՛ Գեղաձորը»:- կգրի նա մահից առաջ:

Երախտագետ հայ նվիրյալները պոֆեսոր Վարազ Առաքելյանը, Գարեգին Մխիթարյանը, Արցախ Բունիաթյանը և Պավել Անանյանը, սրբորեն կատարեցին մեծ հայրդու պատգամը:

Նրանք Գարեգին Նժդեհի Վլադիմիր քաղաքից բերած աճյունից մի մաշունք պահ տվեցին նրա՝ այնքան սիրելի Խուստուփին, իսկ ամբողջական աճյունը ամփոփեցին Սպիտակավորի սուրբ Աստվածածին եկեղեցու բակում:

1989 թվական, հունիսի 17:

Հայոց աշխարհի բոլոր ծայրերից հավաքվել են Սպիտակավոր:

Կոչնա՛կ, զանգա՛կ...Մոզես Գորգիսյանի դեկավարմանը Սպիտակավոր է հասցվում քանդակագործ Գեղամ Սահակյանի կերտած տապանաքարը: Շիրիմի վրա տեղադրելուց առաջ տապանաքարի տակ է դրվում հայ նվիրյալ Վարազ Առաքելյանի կազմած մագաղաթագիրը. «Հա՛յ պարմանի, եթե երբևէ ձեռքդ անցնի այս փոքրիկ վկայությունը, իմացի՛ր, որ դու գտել ես հերոսանց հերոս Նժդեհի հավետ սրբազան աճյունը: Մրա տիրոջ ձայնից բնդում էին Սյունյաց բարձր լեռները, հայ ազգի արյունաբքու

բշնամիները քաքնվում էին ձորերում ու ձերպերում: Ծնկի՝ եկ աճյունի առջև»:

Քահանան խնկաշունչ ձայնով օրհնում է շիրիմը: Օդն անգամ քրքում է հուզմունքից:

- Իսկ ժամանակակիցները հիշում են
- Ամեն խոսքը պատգամ էր, անոր ներկայությունը լույս ու ոգևորություն էր:
- Մի հեքիաթային հերոս էր, որ իր ձիու վրա հեծած՝ ամեն տեղ էր:
- Նա ինքն էլ հավատացած էր, որ անխոցելի է:
- Ողջու՛յն, բյուր ողջյուն քեզ Ղափան-Գեներվազ-Գողթանի յոթն անգամ սիրված հրամանատար Նըժդեհ:

Դեպի Ջանգեղուր մեկնող իմ հայրենակիցներ, մի պահ թերեք ձեր ճամփան, մտեր Սայխտակավորի գավիթը, խոնարհվեք մեծն Գարեգին Նժդեհի աճյունի առջև և շարունակեք ձեր ճամփան, քանզի նրա հերոսական ոգին կենդանի է և՛ այսօր, նրա ցանած հայրենանվեր հունդերը շարունակում են տալ իրենց հասուն պտուղները: Նրա սուրբ հիշատակը արժանի է դրան...

«Ավան» վարժարանի հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի Յ. Ղարազյուզյան

ՄԻՍԱԸ ՄԵՏԱՐԵՆՑ

**ԲԱՅՑ ԼՈՒՅՄՆ ԻՄ ՀՈԳՎՈՒՅՍ
ՔԻՉ-ՔԻՉ ԿԸ ՄԱՇԻ՝**

Եղել են վիրավոր հոգիներ, որոնք աշխարհ են եկել ու գնացել են աշխարհից՝ անսահման կսկծի ու մորմոքի հետք բողմելով ապրողների սրտերում: Չկա ավելի մեծ ողբերգություն, քան բշվառության մեջ մեռնել հիշելով անցյալի կարճատև, երջանիկ պահերը: Դրանք դարի մեծագույն հոգիներն են՝ չափազանց դժբախտ և միեմույն ժամանակ խորապես զգայուն: Նրանք՝ այդ մեծագույն անհատականությունները, անսահման տառապանքով են նկարագրել դարի սարսափները, ցավ ու կսկիծ են զգացել եղծված գեղեցկությունների նկատմամբ:

Այդ տեսակետից մեր գրականության մեջ առանձնանում է մի պատանի, որն անցել է բովանդակ մի կյանք՝ փշրված

երազների, վիրավոր սիրո, խորտակված անուրջների միջով:

Այսօր հիշատակի ու սրբազան խոնարհման խոսք են ուզում ասել Միսաք Մեծարենցի մասին, որն արտաքուստ թերևս ամենագույալ բանաստեղծն էր, բայց ներքուստ բարդ անցումներով ու զարմանալի ելևջներով փորորկուն հոգի: Պատահական չէ, որ 20-րդ դարի հանճարեղ բանաստեղծ Եղիշե Չարենցը բանստեղծորեն այսպես է ներկայացրել նրան. «Արյուն է եղել աշխարհում: Եղել է եղևոն ու կոփվ: Լեռնացել են ուժեր վիթխարի ամեհի եղած իրար դեմ: Աշխարհից հեռու մի գյուղում, եղեգնյա մի սրինգ կտրած, Արև է երգել ու գարուն այս հիվանդ հանճարեղ պատանին»:

Նրա ծննդավայրն էր Բիսկյան գյուղը: Դաժան ու վեհ գեղեցկությամբ օժտված Ակն գավառի այդ գյուղակը երևք կեղմերից շրջապատել էին վիթխարի լեռներն ու անդնդախոր ձորերը, իսկ չորրորդ կողմից հոսում էր որոտացող Եփրատը: Իսկ բանաստեղծը այսպես էր ներկայացնում իր ծննդավայրը.

Կիրճին խորը, ժայռին ծոցն է գյուղանկարը փռված,

Տարտամորեն, հսկայական, արծիվի է սը ձևերով,

Մագիլները խորասուզած խորշերու մեջ մրանած:

Գյուղը շրջապատված էր մասրենիների թփերով, օղի մեջ մշկենու ու ռեհանի բույրն էր տարածված: Դաշտավայր մտնող մարդը կհիանար եղնիկների վարգով, փարթամ բուսականությամբ, գետի ահեղագոչ խշշոցով, իջևանատուն մտնող ու դուրս եկող քարավանների դողանջով: Ինքն էլ, հայրենի բնությանը ծուլված, մեծանում էր լի ապագայի երազներով ու անուրջներով: Մեծարենցի քնարական հերոսը անսահման սիրում էր գյուղը և բացականչում.

- Իմ մշկենի ծառ ու ծաղկի գյուղը հոն է...

Բայց 16 տարեկան Միսաքի հոգում ծայր են առնում սարսափելի տազնապները մահվան դեմ ապրելու համար: Ծայր է առնում մանուկ հոգու տառապանքը: Բնությունը, որ ժլատ էր գտնվել բանաստեղծի նկատմամբ, շտկում է իր սխալը՝ թերելով մտքի հասունացում և տաղանդի փթթում:

1907 թվական: Հրատարակվում են «Ծիածան», ապա «Նոր տաղեր» ժողովածուները: Ինչ էլ ասելու լինեին, ինչպես էլ գրեին, բոլորը միաբերան վկայում էին, որ գրական աշխարհ է մտել չափազանց ինքնատիպ մի բանաստեղծ, որը բերում է նոր շունչ, նոր խոսք: Իսկ 1907 թվականին բանաստեղծը գրում է .

... Բայց լույսն իմ հոգվույս քիչ-քիչ կը մաշի ...

Եվ բանաստեղծի հոգու լույսը մաշեց 1908 թվականին: Նա ծուլվեց բնությանը, ցավն ու տառապանքը պահեց իրեն, իսկ մարդկանց տվեց իր «հուրերն ու ոսկիները»: Այսպես նա դարձավ սիրահարների ողբեկիցը, բոլոր պատանի սրտերի ասպետը: Իր նման քնքուշ պոետիա է ստեղծել և ասել. «Մեկդի բողոներ քիչ մը անմարդկային անձնաբանությունները բարախելու բնության սիրով, բանաստեղծը բնության ցոյացումը պիտի րլլա: Քերթվածները իբրև բառ, պետք է ունենան տերևին քրքումը, բռնունին դալալը, մարդերուն գորովը, դաշտին ու լեռան մշտանուն գորությունը...»:

Այսօր մեզ հետ չէ քնքուշ ու նուրբ քնարերգուն, բայց նրա երգած արեղ քերմացնում է մեզ, մեր հոգին պարուրում տար մայրական զգովանքով:

Նա գնաց աշխարհից մնալով միշտ պատանի իր առիներն ու գրավիչ խոսքով, տեսքով ու պատկերով:

Ավարտենք այս հիշատակի խոսքը «Լահագն Դավթյանի խոսքերով,

Եկար գունատ ու տրտում,

Աղոթեցիր ու անցար,

Ուր բուրումներ մնացին երիցուկի ուրցի,

Ու ասես ցավն աշխարհում,

Դարձավ աղոթք մի պայծառ,

Ու ասես մահն աշխարհում,

Փոխվեց անմահ գրույցի...



ԻՉՆԱՆԸ շատերին է հոգեհարազատ ու սրտամոտ, սակայն ոչ բոլորին են հայտնի նրա պատմական անցյալի մանրամասները:

Հայաստան աշխարհի գեղատեսիլ անկյուններից է ԻՉՆԱՆԻ շրջանը՝ իր երկնա-

քեր լեռներով, հաստարուն կաղիններով ու բազմերանգ դաշտերով:

Բնությունը տարվա բոլոր եղանակներին հրապուրիչ է այստեղ: Ակամա մտածում են՝ աշխարհում կա՞ արդյոք բնության նման հմուտ մեկ այլ դերձակ, քանդակագործ կամ նկարիչ: Նրան նախանձել են անգամ Ռաֆայելը, Պիկասոն, Միրելանջելոն, իսկ գույների վարպետ Մարտիրոս Մարյանը մի առիթով ասել է. «Ամենամեծ իմաստությունը բնության լեզուն ճիշտ հասկանալն է»: Հնում Ադատի արտասովոր հովիտը և այն եզերող անտառապատ լեռնալանջերը միջնադարյան Հայաստանի Գուգարք նահանգի Կողբավար գավառի մի մասն էին: Ավելի ուշ արարական տիրապետության ժամանակաշրջանում և հետո, շրջանն անվանվել է Կայենի գավառ կամ Սևորդաց երկիր, իսկ հյուսիս-արևելքը Մահկանաբերդ:

Բազրատունիների ժամանակից հատուկենտ հուշարձաններ են պահպանվել այստեղ՝ Մորո ձորի խաչածև հատակագծով եկեղեցին և երկրի հյուսիսային սահմանները հսկող մի քանի ամրոցներ (Բուդուր, Մանրաչ, Աղջկա բերդ): Կայենի և Մահկանաբերդի կյանքը ծաղկում է ապրել 12-14-րդ դդ., երբ այդ գավառները անցել են Մահկանաբերդի Արծրունիների և Ջարդալյանների իշխանության տակ:

Կառուցվել և նորոգվել են Հաղարծինի, նոր Գետիքի, Մակարա, Դեղձուտի, Կիրանցի, Առաքելոց և մի շարք վանական համալիրներ: Նշված ժամանակաշրջանում մեծ նշանակություն են ձևոք քերել առևտրական տարանցիկ ճանապարհի վրա կառուցված Առաքելոց, Կոմանի ձոր ավանները, Սալսիի, Սրանոցի կամուրջները և քարվանսարաները: Շրջանի վանքերում են ապրել ու ստեղծագործել հայ մշակույթի միջնադարյան մեծ երախտավորներ Մսիթար Գոշը, Գանձակեցին, Հովհաննես Արմանեցին, ճարտարապետ-քանդակագործներ Գրիգորեսը ու Մինասը, Գողավանքի նորաքանդակ հուշարձաններ կերտող հուշակավոր Պողոսը, Մակարավանքի քանդակագործների շնորհաշատ վարպետ Երիտասարդը, Դեղձուտի վանքի զարդաքանդակների հեղինակներ Բալաթն ու Պողոսը և շատ ուրիշներ:

ՎԱՐՈՒԺԱՆ

Հայաստանի և Գավառի հոգևոր ու մշակութային կյանքում առանձնապես նշանակալից է Մխիթար Գոշի անգնահատելի վաստակը: Նա հիմնադրեց դպրոցայանք ու գրչությանք զարգացած Նոր Գետիկի մշակութային կենտրոնը և վանական դպրոցը՝ թողնելով արժանի հետնորդներ, որոնք շարունակեցին իրենց ուսուցչի մեծ գործը: Կայենի ու Մահկանաբերդի կենտրոններում բարձր զարգացման հասավ նաև ձեռագրերի արտագրության և վիճագրերի արվեստը: Դեղձուտի, Գետիկի, Հաղարծնի վանքերում գրչության արվեստ ուսանելու էին գալիս նույնիսկ կենտրոնական Հայաստանի և Արցախ աշխարհի գրչության օջախներից:

Հնագիտական ուսումնասիրությունները պարզել են, որ Իջևան շրջանի տարածքը բնակեցվել է դեռևս քարե դարից: 11րդ-ի կեսից Իջևանի տարածքը ենթարկվել է սելջուկ-թուրքերի ավերածությունների: Թարար-մոնղոլների արշավանքների հետևանքով 13-րդ դարում ավերվել է Կայեն գավառը, իսկ ժողովրդի մեծ մասը գերվել կամ կոտորվել է: 18-րդ դարի սկզբին Կարաբաղի, Գյուլիստանի և Ջրաբերդի գավառներից զգալի թվով հայեր բնակություն են հաստատել շրջանի տարածքում, հատկապես Մերար, Աչաջուր, Մարիգյուղ, Ազունբարա, Թառակ և Գերա-հովիտ բնակավայրերում:

Շրջանի անունը և սահմանները մի քանի անգամ փոփոխվել են, ի վերջո այն կոչվել է Քարվանասիա, այնուհետև Իջևան:

Պատմական անհերքելի փաստեր կան, որ Իջևանի շրջանը եղել է Արցախի 12 նահանգներից մեկը: Պատմական աղբյուրները վկայում են, որ Արցախ - Խաչեն - Մահկանաբերդ (Իջևան) եղել է մի ամբողջություն, որոնց միջև հիմնական կապը սլախպանվել է հոգևորականության միջոցով:


Կիրակոս Գանձակեցու «Հայոց պատմության» մեջ մատենագրական տեղեկություններ կան այն մասին, որ Հաբեների տեր Վախրանգի կինը՝ Արզու Խաթունը, 1196-ին վարազույրներ է գործել Մակարավանքի համար: Մակարավանքի հովանավորներից է եղել Մահկանաբերդի իշխան Կուտկանը: Կուտկան իշխանը սերտ կապեր է ունեցել Հաբերքի և Ծարա

իշխանների հետ: Պատմության մեջ հիշատակվում է մի այսպիսի հիշողություն. «Կուտկանը, գալով Թիֆլիս, մասնակցում է տոնախմբություններից մեկին, որտեղ տղամարդիկ ընթշամարտի մրցույթի էին դուրս եկել, և Կուտկանը իր բացառիկ ուժով ու ճարակությամբ աչքի է ընկնում հաղթելով և ստանալով ընծաներ: Տեղեկություններ կան, որ Մահկանաբերդի մի շարք վանքերի հոգևորական և մշակութային կենտրոններ են համարվել Դեղձուտի վանքը, և 13-րդ դարի վանքի Առաքել վարդապետը մեծ դեր է խաղացել այդ գործում: Այս վանքը սերտ կապեր է ունեցել Գանձասարի և Կիլիկիայի հետ:

Իզուր չէ, որ Հայաստանը անվանում են քանգարան բաց երկնքի տակ: Քարաշատ Հայաստանում դժվար է մի տաշած քար գտնել, որի վրա գրված չլինի պատմության դրվագներից որևէ մեկը, սա է անմահության աղբյուրը: Եվ այդ անմահության համար պարտական ենք հավատի ու հոգևոր կենտրոններին, ինչպիսիք էին և են Հաղարծինը, Գոշավանքը, Հաղպատը, Մակարավանքը:

Իջևանի մասին տեղեկությունների համար բավական է շրջել նրա գեղատեսիլ անտառներում ու կիրճերում, ուր ամենուրեք կարելի է հանդիպել պատմական հուշարձանների: Իջևանի շրջանը Հայաստանին տվել է բազմաթիվ նշանավոր մարդիկ: Շրջանը մեծ ուշադրություն է դարձրել ու դարձնում ուսման հարցերին, որը շատ կարևոր պայման է ուղեպես սահմանամերձ գոտի: Այդ է վկայում նաև այն կարևոր փաստը, որ վերջերս Իջևան քաղաքում Երևանի «Մխիթար Գոշ» միջազգային համալսարանը բացել «Տավուշ» ինստիտուտը, որը կրելով «Մխիթար Գոշ» անունը ստանձնում է հայրենի հողում զարգացնել կրթական հարցերը:

*Երևանի «Մխիթար Գոշ» միջազգային
համալսարանի Իջևանի «Տավուշ»
ինստիտուտի պատմության դասախոս
Ս. Նալբաղչյան*



Սեպտեմբերի 21-ին կկայանա կրթահամալիրի վարժարանական խորհրդի նոր քննարկություններ, որին իր քեկնածությունը կարող է առաջադրել VIII և IX դասարանի ցանկացած աշակերտ:

ՀԱՅՖԻԼՄ

ԱԼԲԵՐՏ ՄԿՐՏՉՅԱՆԻ ՆՈՐ ՖԻԼՄԸ

«Գայֆիլմ» կինոստուդիան պատրաստվում է արտադրության իջեցնել նոր ֆիլմեր: Դրանցից մեկը ռեժիսոր Ալբերտ Մկրտչյանի սցենարով գրված «Ավետյաց քաղաքի մեղեդին» ֆիլմն է: Այդ առիթով ռեժիսորի հետ ունեցած գրույցը կբավարարի ձեզ հետաքրքրող հարցերը: Եվ այսպես...

-Պրն. Մկրտչյան, ինչպե՞ս ծնվեց ֆիլմի գաղափարը, ի՞նչը դարձավ թեմայի աղբյուրը:

Սցենարի ստեղծման պատմությունն սկսեմ սկզբից, բոլորիս համար ողբերգական և հիշողություններից անջնջելի 88-ի երկրաշարժի հենց առաջին օրվանից ես աղետի գոտում եմ եղել: Գյումրին իմ ծննդավայրն է, և ես չէի կարող անտարբեր մնալ: Ես այնտեղ էի և տեսախցիկը ուսիս, մի աչքս նկարում էր, մյուսը արտասվում: Շատ ահավոր տեսարաններ եմ նկարել, որոնք տեղ կգտնեն այս ֆիլմում: Երկու տարի անց, երբ արդեն բացել էի Գյումրիի կինոստուդիան և որը արդեն տվել էր իր շրջանավարտները, մի օր շրջում էի քաղաքում: Ուշադրությունս գրավեց մի տնակ, որի բակում մետաղյա տաշտակի մեջ փայտի կտորներ և ճյուղեր էին վառվում: Տնակից դուրս եկավ մի կին և տաշտակը ծողով քաշեց դեպի տուն: Ես ճանաչեցի մանկության ընկերուհուս, որի հետ ապրել ենք նույն շենքում: «Անահիտ»,- ծայնեցի ես ու առաջ գնացի: Կինը բարձրացրեց զլուխը, նա էլ ճանաչեց, ընդառաջ եկավ: Գրկախառնվեցինք, հուզվեցինք և ապա գնացինք տուն: Պատերին սև շրջանակների մեջ, տեսա իմ ծանոթներին՝ նրա եղբորը, հորը, մորը, հարսին, թոռանը... Ի՞նչ հարցնեի, արդեն պարզ էր: Զրուցում էինք երբ դուրը բացվեց և պալուսական ուսին ներս մտավ 6-7 տարեկան մի տղա: Նայեց ինձ և մատը վրաս ուղղելով հարցրեց. «Պապա՞ն է»: Անահիտը բարկացավ վրան և դուրս ուղարկեց: Նա դուրս չգնաց այլ մի ակնբարրում հայտնվեց ուսերիս, սկսեց քաշել ականջներս, քիթս, «ծի-ծի» էր խաղում: Մի կերպ ինձնից պոկելով դուրս ուղարկեցինք, «ես ո՞վ է»: Կինը պատմեց, որ այլևս չէր կարող



ԱԼԲԵՐՏ ՄԿՐՏՉՅԱՆ

մենակ գերեզման գնալ-գալ և ամբողջ օրը արտասվել ու որոշել էր մանկատնից մի երեխա որդեգրել, նույնիսկ չիմանալով, թե ո՞վ է, ու՞մ տղամ է: Նա պատմեց, որ տղան քաղաքում շրջում է և որտեղ մի անտեղ, խեղճ մարդ է տեսնում, դուրը եկածին համոզում է, տուն բերում և ստիպում իրեն. «Ամուսնացի՛ր սրա հետ, նա իմ պապան պիտի լինի»: Ահա այս դեպքն էր որ ինձ ապշեցրեց և առիթ հանդիսացավ գրելու այս սցենարը:

-Իսկ ի՞նչ ոճով է նկարահանվելու ֆիլմը և ովքե՞ր են խաղալու:

-Ֆիլմը լինելու է տրագիկոմեդիա: Ես սիրում եմ այդ ոճը, այն հարազատ է ինձ: Ամբողջ կյանքս այդ ժանրի մեջ եմ ապրել ծիծաղն ու արցունքն իրար խառնված: Սովորաբար սցենարը գրում եմ կոնկրետ դերասանների համար, սա առաջին դեպքը չէ: Սցենարի առաջին տարբերակի համաձայն, խաղալու էին Գայա Նովենցը, Սոս Սարգսյանը, Խորեն Աբրահամյանը, Արմեն Զիգարիսյանը: Բայց արդեն տարիներ են անցել, և Գայան երևի այլևս հարմար չէ այդ դերի համար: Ավելի լավ է ասածս եկրանին տեսնեք:

-Ֆիլմը կոմերցիոն նպատակ հետապնդու՞մ է, թե՞ գուտ ազգային է լինելու:

-Ըստ երևույթին ես պատկանում եմ այն արվեստագետների թվին, որոնց համար առաջնային է հոգին կրծող թեման, նրանք ապրում են այդ թեմայով և ոչ մի ուրիշ խնդիր նրանց չի հետաքրքրում: Ես գրել եմ իմ ռեժիսորական սցենարը, արտահայտել եմ հոգուս եղածը, և հիմա էլ նոր տեսարաններ ու դրվագներ են ի հայտ գալիս: Եթե արվեստագետը ցավ կամ ուրախություն ունի, այն պետք է կիսի ժողովրդի հետ:

-Որքա՞ն ժամանակ կպահանջվի նկարահանումների համար:

-Դավանաբար մեկուկես կամ երկու ամիս:

«Կինոաշխարհ» շաբաթաթերթ

«Թիկունքը հաղթանակի կեսն է»

Ասում է Վարդան Պետրոսյանը

Հայրենիքից հեռու, հայրենիքի հետ, հայրենիքի համար. ահա այն սկզբունքը, որով առաջնորդվում է Վարդան Պետրոսյանը: Այդ սկզբունքից էլ ներկայումս նա դարձյալ Հայաստանում է:

-Սովորաբար, հայրենիք կատարած ձեր յուրաքանչյուր այցելություն ինչ-որ նպատակ է հետապնդում: Ի՞նչ նպատակ ունեք այս անգամ:

-Նպատակս մի նոր դուետ ստեղծելն է Վարդան Պետրոսյան-Խորեն Աբրահամյան: Ուզում ենք բեմադրել «Ծերունին ու սովը» ներկայացումը:

-«Ծերունին ու ծովի» պարոդիան:

-Կուպիտ է ասված, ոչ, պարոդիա չէ. պարզապես ներշնչված է այդ հայտնի վիպակից: Փորձել ենք նոր հոգեբանական վերլուծություններ կատարել. ինչը համապատասխանում է մեր այսօրվա քաղաքական-հասարակական իրավիճակին: «Ծերունին ու սովը» պիեսում Աբրահամյանը խաղալու է ծերունու դերը, ես ծովը այսինքն սովը:

Ծերունին ներկայացնում է մեր ժողովրդին, նա մեր ժողովրդի հավաքական կերպարն է իմաստուն, ուժեղ, ծեր, դժվարությունների մեջ ապրող: Ծովը, այսինքն սովը, այսօրվա մեր փոթորկուն կյանքն է իր շնածկներով, ձկներով ու թռչուններով:

-Այդ դուետային աշխատանքն իր բնույթով, ո՞րով նման չի՞ լինելու նախորդին «Մեր մանկության մանգո»-ին:

-Բոլորովին, սա շատ ինքնատիպ ներկայացում է, թատերական կուլտուրայում այսպիսի բան դեռ չի եղել:

Երկու բոլորովին տարբեր ժանրի դերասաններ մեկը էստրադային, պարադիստական, մյուսը հոգեբանական ռեալիզմի ներկայացուցիչ, խաղում են մեկ ներկայացման մեջ չիրաժարվելով սեփական ոճից: Երբ տարբեր ոճեր համաձուլվում են և փորձում ստեղծել մի ամբողջականություն, շատ մեծ էֆեկտ է ունենում, և որքան հակասական են ժանրերը, այնքան մեծ է էֆեկտը:

-Ո՞վ է սցենարի հեղինակը, ու՞մ գաղափարը:

-Գաղափարը ծնվել է ինձ մոտ, դեռևս մի քանի ամիս առաջ, երբ երևանում էի: Կանչեցի Վահրամին, խոսեցինք, քննարկեցինք, փորձեցինք, համաձայնեցինք Աբրահամյանի հետ, և Վահրամը գրեց սցենարը:

-Ինչու՞ ընտրությունը

կանգ առավ հատկապես այրն Աբրահամյանի վրա...

-Խորենի հետ խաղալու գաղափարը շատ վաղուց կար, բայց ոչ ոքի չէի ասում: Խորենի վերադարձը թատրոն, կապացուցի, որ մենք կանք դեռ չենք կործանվել: Եվ

հետո գոյություն ունի սերնդափոխություն: Հանգամանքի բերումով Խորենի և մեր սերնդի կապը խզվեց և այդ կապը անպայման պետք վերականգնել: Խորենը և նրա սերնդակիցները մինչև գործը մեր ձեռքը չտան, իրավունք չունեն գնալու:

-Լավ, կարելի՞ է մի փոքր ծանոթանալ սցենարին:

-Ուզում եմ սկսել վիպակից. ի՞նչ է կատարվում Հեմինգուեյի մոտ, ծերունին գնում է ծով, մեծ դժվարությամբ բռնում է ծուկը, և ետդարձին շնածկները հարձակվում են, ուտում ծուկը, և ծերունին ձեռնունայն վերադառնում է ափ: Իսկ մեր պարագայում ծերուկը ժողովուրդ է, ծուկը ժողովրդի իդեալը, իսկ ծովը մեր կյանքը: Ծերունին մտնում է փոթորկած կյանք, երկար տառապանքներից հետո ձեռք է բերում իդեալը ազատությունն ու անկախությունը, բայց, ցավոք, այդ իդեալը բաժին է ընկնում շնածկներին. ահա ներկայացման իմաստը: Իսկ վերջում շատ կարևոր մի իրադարձություն Խորենի մենախոսությունը, որը քաղաքական նշանակություն ունի: Հանդիսատեսը տեսնում է իր կյանքը, վերջին տարիների պատմությունը և տեսնում, որ միևնույնն է ծերունին ոտքի վրա է և կոչ է անում չբարոյալքվել: Եվ դա վերականգնագման մեծ դրգա է բարոյական շատ մեծ անկումային վիճակում գտնվող մարդու համար:

«Կինոաշխարհ» շաբաթաթերթ



ՎԱՐԴԱՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ



Կինոնկարահանման հրապարակներում

- ❖ Ուրբերտ Դե Նիրոն և Էդվարդ Բերնսն այժմ զբաղված են New Line Cinema կինոընկերության «15 րոպե» ֆիլմի նախագծի վրա: Դե Նիրոն ֆիլմում կխաղա դետեկտիվի դերը, որը մի հրշեջի հետ (Բերնս) հետաքննում է մի սպանության գործ: Ֆիլմը նկարահանելու է Ջոն Դեզվիլդը («Երկու օր տափաստանում»):
- ❖ Ռեժիսոր Բրայան Դե Պալման («Առաքելությունն անհանարինն է») աշխատանքներ է տանում նոր «Թռիչք դեպի Մարս» ֆիլմի վրա: Այն պատմելու է դեպի մարս թռիչք կատարած առաջին խմբի մասին, որը տեղ չի ստացել կորչում է տիեզերքում: Առաջին խմբին օգնելու է մեկնում երկրորդը:
- ❖ Ռեժիսոր Ռոնալդ Էմերիսը («Անկախության օրը», «Գոծիլա») այժմ ձեռնամուխ է եղել նկարահանելու «Հայրենասերը» ֆիլմը, որի գլխավոր դերում հանդես կգա Մեյ Գիբսոնը («Խելագար Մաքսը» 1,2,3, «Մահաբեր զենքը» 1,2,3,4, «Փրկագին», «Քաջարի սիրտ»): Ֆիլմի դեպքերն ընթանալու են այն ժամանակ, երբ Ամերիկան պայքար էր մղում իր անկախության համար, որտեղ Գիբսոն կատարում է ընտանիքի հոր դերը, որը մասնակցում է այդ պատերազմին: Ֆիլմի սցենարը գրել է Ուրբերտ Ուոդարը:

Կրիս Ռոք կամ Կրիս Ռոքն-Ռոլ



Կրիս Ռոք

Նրան անվանում են 90-ականների ամենափայլուն կոմիկներից մեկը: Հեռուստատեսությունում նա իր սեփական շոուն է վարում, մեծ էկրանում խաղացել է մի քանի դերեր, սակայն բոլորն էլ կարողացել է կատարել դերասանական այնպիսի վարպետությամբ, որ նրան կենսաանձի նույնիսկ այդ ժանրի արքան Ջիմ Բերին: Մնում է հիշել Կրիս Ռոքի կատարած որևէ կինոդրվագ և անկախ քեզանից սկսում ես ծիծաղել: Հարկավոր է վերհիշել նրա առաջին դերակատարումը Լյուկ Բեսոնի հանրահայտ «Հինգերորդ էլեմենտում», ուր նա խաղում է հանրահոջակ ռադիովարողի դերը:

Եվ դա կատարում է այնպիսի փայլով, որ այդ ֆիլմում նկարահանված հոլիվուդյան գերաստղ Բրյուս Ուիլիսի կողքին միանգամայն հաջող է նայվում:

Ռոքի արդեն հաջորդ «Մահաբեր զենք-4» ֆիլմում, ուր նրա խաղընկերներն էին Մեյ Գիբսոնը և Դենի Գլովերը, Կրիսին հաջողվեց ստեղծել այնպիսի կերպար, որ նրան տեղ ապահովեց «Մահաբեր զենքի» հաջորդ մասերում նկարահանվելու համար:

Բոնդն ընդդեմ Բոնդի

Երկու ամերիկյան խոշորագույն կինոստուդիաներ սկսել են միմյանց մեղադրել «գրագողության» մեջ: Նրանց կոպախնձորը Ջեյմս Բոնդի հանրահայտ «007» գործակալի մասին հերթական ֆիլմի նկարահանման իրավունքի օրինականության խնդիրն է: MGM ստուդիան, որը նկարահանում է Բոնդի մասին «Մեկ աշխարհը չի բավականացնում» նոր ֆիլմը Պիրս Բրոսնանի մասնակցությամբ, մեղադրում է Sony pictures-ին, որը ցանկանում է վերարտադրել 1965 թ. նկարահանված «Գնդաձև կայծակի» ռեմիքսը: Դժվար չէ կռահել, որ այդ ֆիլմը նույնպես հանրահայտ լրտեսի մասին է լինելու: Չնայած որ MGM-ն ունի լրիվ հնարավորությունները կինոաշխարհից դուրս մղելու SONY-ի ֆիլմը, քանի որ բացի Բրոսնանից ֆիլմում նկարահանվելու են նաև Սոֆի Մարսոն, Դենիզ Ռիչարդը և Շարոն Սթրոուը: Եվ մինչ ստուդիաների միջև պայքարը շարունակվում է, MGM-ն արդեն որոշել է նկարահանումներն անցկացնելու գլխավոր վայրը: Եվ որքան էլ դա տարօրինակ թվա, նոր ֆիլմի գլխավոր իրադարձությունները տեղի են ունենալու ... Ադրբեջանում, որն, անկեղծ ասած, շատ զարմացրեց մեզ:



Բոնդն Էնդրեյ...



«Ավան» կրթահամալիրի մեդալի երկու հավակնորդներ՝ Տիգրանը Մամյան ու Հրայր Մուրադյան, արժանապատվությամբ հանձնեցին և պետական ավարտական կենտրոնացված քննությունների արդյունքները, պարզևատրվեցին ոսկե մեդալով: Այժմ նրանք ջանասիրությամբ պարապում են՝ ցանկացած բուհ ընդունվելու համար:

ՀՀ Կ և Գ նախարարությունը «Ավան» դպրոց-վարժարանին հարցազրույցով երևանի պետական համալսարանի, Հայկական պետական մանկավարժական համալսարանի մաթեմատիկայի և ֆիզիկայի ֆակուլտետների ու ք մասնագիտությունների գծով հարցազրույցով ընդունվելու արտոնություն է տվել: Այս տարվա շրջանավարտներից խորեն Դարբինյանը, Բաբկեն Հակոբյանը և Տիգրան Մամյանը արդեն մասնակցեցին այդ հարցազրույցներին և ընդունվեցին: Սակայն մեդալակիր Տիգրան Մամյանը նախընտրեց մասնակցել կենտրոնացված համակարգով ընդունելության քննություններին:



Այսօր /05.06.2001թ./ Ավան համայնքում մեծ իրադարձություն տեղի ունեցավ: Բոլորս գիտենք, որ «Ավան» դպրոց-վարժարանը գտնվում է Իսահակյան թաղամասում: Հունիսի 5-ին՝ Սահմանադրության օրը, թաղապետարանի նախաձեռնությամբ, Իսահակյան թաղամասի մի գողտրիկ ու ծաղկազարդ պուրակում տեղադրվեց Շիրակ աշխարհի գավակի հայ մեծ բանաստեղծ Ավետիք Իսահակյանի կիսանդրին:

Կրթահամալիրի ճամբարականները ուսուցչուհի Ռուզաննա Սարգսյանի ղեկավարությամբ, փոքրիկ ուղերթ կազմակերպեցին դեպի նորաստեղծ պուրակը, ծաղիկներ դրեցին բանաստեղծի կիսանդրու պատվանդանին, սիրո ու նվիրումի խոսքեր շնջացին, արտասանեցին մեծ Վարպետի հայրենասիրական բանաստեղծություններից, իսկ փոքրիկ Լիանան թոթովեց:

Երգը երգում են հովիվն ու արքան,
Ահա ինչով ես դու հավերժական...

Այսուհետև Իսահակյան թաղամասը ավելի իմաստավորվեց, դարձավ ավելի նշանավոր, քանզի Վարպետի ասույթներն ու պատգամները հայոց լեզվի, գիր ու գրականության մասին միշտ ուղեկցել են մեր սաներին:



Ինչպիսի՞ն է երջանկությունը, խուսափուկ, անորսալի այդ էությունը: Եվ ինչից է բաղադրվում այն: Սրանք բարդ հարցեր են, որոնց պատասխաններն ավելի լավ է թողնենք փիլիսոփաներին և հոգեբաններին: Չայտնի է, սակայն, որ մեր երջանկությունն էապես կախված է մեզանից, իրականության նկատմամբ մեր ունեցած վերաբերմունքից: Առաջարկվող թեստն ամենևին չի հավակնում սպառիչ պատասխաններ տալ երջանկության հավերժական թեմային առնչվող բարդ և բազմազան հարցերին, սակայն կարող է օգնել պարզելու զոնե մեկ հարց: Որքանո՞վ եք դուք երջանիկ: Եվ այսպես, սկսում ենք...

1. Երբ մտածում եք ապրած կյանքի մասին, ապա գալիս եք այն եզրակացության, որ.
 - ա. ամեն ինչ եղել է ավելի շուտ վատ, քան լավ,
 - բ. եղել է ավելի շուտ լավ, քան վատ,
 - գ. ամեն ինչ գերազանց էր:
2. Օրվա վերջում սովորաբար.
 - ա. գոհ չեք ձեզանից,
 - բ. համարում եք, որ օրը կարող էր ավելի լավ անցնել,
 - գ. քնելու եք պատրաստվում բավարարվածության զգացումով:
3. Երբ նայում եք հայելուն, մտածում եք.
 - ա. «աստված իմ, ժամանակն անողոք է»,
 - բ. «դե ինչ, դեռ բնավ էլ վատ չէ»,
 - գ. «ամեն ինչ հիանալի է»:
4. Երբ իմանում եք ծանոթներից մեկի խոշոր շահումի մասին, մտածում եք.
 - ա. «դե իմ բախտը երբեք չի բերի»,
 - բ. «գրողը տանի, ինչու՞ ես չեմ»,
 - գ. «մի օր էլ այդպես իմ բախտը կբերի»:
5. Եթե ռադիոյով լսեք ինչ-որ վատ իրադարձության մասին, ինքնեք Ձեզ կասեք.
 - ա. «այդպես էլ մի օր ինձ հետ կպատահի»,
 - բ. «բարեբախտաբար այդ դժբախտությունն ինձ չըջանցել է»,
 - գ. «այդ լրահաղորդումները դիտավորյալ կրքեր են բորբոքում»:
6. Առավոտյան արթնանալով ավելի հաճախ.
 - ա. ոչ մի բանի մասին մտածելու ցանկություն չկա,
 - բ. ծանրութեթև եք անում, թե ինչ է տալու հաջորդ օրը,
 - գ. գոհ եք, որ սկսվեց նոր օրը, և կարող եմ հաճելի անակնկալներ լինել:
7. Ձեր մտերիմների մասին մտածում եք.
 - ա. նրանք այնքան էլ հետաքրքիր և օգնելու պատրաստ չեն, ինչպես որ կցանկանայի,
 - բ. իհարկե, նրանք էլ թերություններ ունեն, բայց, ըստ էության, բավականին տանելի են,
 - գ. հիանալի մարդիկ են:
8. Երբ Ձեզ համեմատում եք ուրիշների հետ, ապա գտնում եք, որ.
 - ա. «ինձ թերազնահատում են»,
 - բ. «ես վատ չեմ մնացած մարդկանցից»,
 - գ. «հարմար եմ առաջատար լինելու համար, հավանաբար, ընդունում են բոլորը»:
9. Եթե ձեր քաշն ավելացել է 4-5 կիլոգրամով.
 - ա. խուճապի եք մատնվում,
 - բ. համարում եք, որ կատարվածում ոչ մի էական էլ բան չկա,
 - գ. անմիջապես անցնում եք դիետայի և ջանասիրաբար պարապում եք ֆիզիկական վարժություններով:
10. Ընկճված լինելիս.
 - ա. անիծում եք ճակատագիրը,
 - բ. գիտեք, որ վատ տրամադրությունը կանցնի,
 - գ. ձգտում եք այլ բաներով զբաղվելով, ծանր խոհերից ազատվել, ցրվել:



1. Ուղտերի բաժանումը

Մի ծերունի, որը երեք որդի ուներ, կարգադրեց, որպեսզի նրանք իր մահից հետո բաժանեն իր ունեցած ուղտերն այնպես, որ ավագը վերցնի բոլոր ուղտերի կեսը, միջնակը մեկ երրորդը և փոքրը բոլոր ուղտերի իններորդ մասը: Ծերունին մահացավ և թողեց 17 ուղտ: Որդիներն սկսեցին բաժանումը, բայց պարզվեց, որ 17 թիվը չի բաժանվում ոչ 2-ի, ոչ 3-ի, ոչ 9-ի: Եղբայրներն ընկան տարակուսանքի մեջ, ինչպե՞ս անեն, և դիմեցին իմաստունին: Իմաստունը նրանց մոտ եկավ սեփական ուխտի վրա նստած և բաժանեց ըստ կտակի: Եւ ինչպե՞ս արեց:

2. Քանի՞ ծու կար

Մի կին զամբյուղով ծու էր տանում շուկա: Հանդիպած անցորդը անզուշուրյամբ նրան այնպես հրեց, որ զամբյուղը շուռ եկավ, և բոլոր ձվերը կոտրվեցին: Անցորդը ցանկություն հայտնեց կնոջը տալ կոտրած ձվերի արժեքը և հարցրեց, ընդամենը քանի ծու կար: «Ես դա չեմ հիշում, - ասաց կինը, - միայն լավ եմ հիշում, որ երբ ես ձվերը զամբյուղում դնում էի գույգ-գույգ, մնում էր մեկ ծու, ճիշտ այդպես էլ միշտ մեկ ծու էր մնում, երբ ձվերը դնում էի երեք-երեք, չորս-չորս, հինգ-հինգ, և վեց-վեց: Բայց երբ յոթ-յոթ էի դնում, ապա ոչ մի ծու չէր մնում»: Քանի՞ ծու կար:

3. Ժամացույցը ուղղված է ճիշտ

Երկու ընկերներ Աշոտն ու Սուրենը, ապրում են մի քաղաքում և իրարից ոչ այնքան հեռու: Նրանցից ամեն մեկը տանն ունի միայն պատի ժամացույց: Մի անգամ Աշոտը սնուցավ լարել այդ ժամացույցը, և ժամացույցը կանգ առավ: «Գնամ Սուրենին հյուր, միաժամանակ կնայեմ ժամը քանիսն է»,- որոշեց Աշոտը: Եվ նա գնաց Աշոտին հյուր, նստեց այնտեղ որոշ ժամանակ, վերադարձավ տուն և ճիշտ ուղղեց ժամացույցը: Դուք կկարողանա՞յի՞ք այդ անել:

5. Ինչի՞ է հավասար տարբերությունը

Խնդրեք ձեր ընկերոջը գրել որևէ երկնիչ թիվ: Այնուհետև թող նա տեղափոխի այդ թվի թվանշանների տեղերը և մեծ թվից հանի փոքրը: Եթե նա ձեզ ասի տարբերության վերջին թվանշանը, ապա դուք նրան իսկույն կասեք, թե ինչի է հավասար ամբողջ տարբերությունը: Ինչպե՞ս է այդ արվում:

6. Բզեզի փակ երթուղին

Կարո՞ղ եք արդյոք շախմատի տախտակի ինչ-որ վաղակում դրված բզեզը հորիզոնական կամ ուղղահայաց ուղղությամբ գնալով հարևան վանդակները, անցնել ամբողջ տախտակով և վերադառնալ իր սկզբնական վարնդակը, ընդ որում յուրաքանչյուր վանդակում լինել միայն մեկ անգամ:

7. Արհեստանոցում

Արհեստանոցում կան 10 տարբեր դազգահներ: Հայտնի է, որ 10 բանվորներից յուրաքանչյուրը կարող է աշխատել միայն երկու դազգահի վրա և յուրաքանչյուր դազգահի վրա կարող է աշխատել միայն երկու բանվոր: Կարելի՞ է արդյոք բանվորներին դազգահների մոտ կանգնեցնել այնպես, որ յուրաքանչյուրը կանգնած լինի այնպիսի դազգահի մոտ, որի վրա կարող է աշխատել:

մեծահոգությամբ, համբերությամբ, ինչ՞ու չէ, նաև գեղեցիկ դիմագծերով, գեղեցիկ մարդ է: Բնության մեջ կան երևույթներ, որոնց գեղեցկությունն ու հմայքը նկատելու համար մարդը պետք է ունենա նուրբ ճաշակ և զգայուն հոգի: Օրինակ թռչունների դայլայլը, նորափթիթ ծաղիկները, արշալույսի բացվելը, լուրթ և արևագարդ երկինքը: Ամեն մի գեղեցկություն ներկայացնելու համար մի քանի տողը չի բավականացնի, դրանք շա՛տ-շա՛տ են: Սակայն կան գեղեցիկ արարքներ, որոնց միջոցով մարդ էակը բարձրանում է, վեհանում, դա աշխատասիրությունն է, ընկածին օգնելու կարողությունը, արարելու, ստեղծելու ունակությունը, բարությունը:

Օֆելյա Մինասյան 5-րդ դասարան

Ո՞րն է գեղեցիկը

Ինձ համար չկա ավելի մեծ ուրախություն, քան ամռանը հայրենի Ձանգեզուրում հանգստանալը: Հայաստան աշխարհի բնությունը բազմատեսակ և զանազան դրսևորումներ ունի, Արարատյան դաշտավայրը իր բիբլիական լեռան հետ, գանգեզուրյան լեռնաշխարհը իր քարածայրերով, խորխորատներով, անտառածածկ սարերով, որի փոքրիկ բացատները գողտրիկ են ու հիասքանչ: Ամառվա տապին Ձանգեզուրի լեռնաշխարհի երկնքում դադադասաի լողում են ամպերը, իսկ ես պառկել եմ ծառերի տակ, և աչքիցս չեն վրիպում այդ գեղեցիկ տեսարանները, թռչունների ծվլլոցը միախառնվում է հողի մեղմ շշուկին, և այդ ներդաշնակ երաժշտությունը շոյում է ականջս: Գետնին սփռված են երփնագույն ծաղիկները: Մտածում եմ. «Օ՛, բնություն, ինչքան անհասկանալի ու գեղեցիկ ես դու... Ինչպե՞ս ես կարողանում ստեղծել բազմազանություն և ի՞նչ կախարհանքով ես կարգավորում այդ ամենը... Ամեն ինչ իր տեղն ունի, և ո-

չինչ ավելորդ չէ քո մեջ, ո՛վ բնություն...»:

Արևի ճառագայթներից ընդարձացած փակում եմ աչքերս: Միջատների տզզոցը խանգարում է քունս: Բացում եմ քամուց թերթված իմ գրքի կորցրած էջը, փորձում եմ վերընթերցել և գտնել կիսատ մնացած տեղը:

Քիչ հետո, ոտքերս ավազի վրայով սահելով, մտնում եմ գետը: Ջրի սառնությունը քարմացնում է ուղեղս: Դիմացս մի խուլ ժայռաքանդակ է. կարծես անզղ լինի. թևերը բացել է, որ պատրաստվի թռիչքի:

Ասֆալտապատ ճանապարհի շրջադարձի մասում քանդակագործը կերտել է արծվի արծանը: Տեսնես ի՞նչ է մտածել:

Արդյո՞ք, լեռնցուն նույնացրել է արծվի հետ, թե առհասարակ ուժ ու զորություն է ստացել այս վայրերում: Անկոտրում է բնությունը, անկոտրում են մարդիկ, նպատակասլաց են, ուժեղ, ու խելամիտ:

Հանկարծ նկատում եմ դիմացի լեռան ամենաբարձր գագաթի արծվին, որն իր ծագին թռչել է սովորեցնում, հենց վայր է ընկնում ծագը, արծիվը սուրալով ընկնում է նրա տակ և թևերի վրա պահում խորխորատներից զարհուրած ծագին, կրկին է բաց թողնում...

Ա՛յ թեզ գարմանք...

Չազը թռչում է.

Կերադարձին մեքենան սլանում է ասֆալտապատ ճանապարհով, հասնում ենք Արարատյան դաշտավայրը: Չնայած օրը արևոտ է ու տաք, սակայն երկնքի կապույտը չի կարելի համեմատել Ձանգեզուրի ջինջ ու մով երկնքի հետ, իսկ Մասիսը սքողվել է թափանցիկ վարագույրի տակ, հետաքրքիր տեսարան է. գագաթներն են միայն երևում: Բիբլիական այս լեռան գագաթները կարծես երկնքից կախված լինեն և հսկեն մեզ:

Հայաստա՛ն աշխարհ, ի՞նչ գեղեցիկ ես դու...

Մանե Անդրեսայան 5-րդ դասարան

ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ ԱՆԿՅՈՒՆ

Հայրենիք

Քո թաղծոտ աչքերին նայելով
Սրտիս մեջ կրակ է արթնանում,
Վառվում է, վառվում ու բոց է տա-
լիս,
Որ սրտիս միջից է դուրս գալիս:

Քո թաղծոտ աչքերին նայելով
Աչքերս հետդ են այրվում,
Այրվում են, այրվում, գլխիցս թռ-
չում,
Ու սիրտս էլ հետս է այրվում:
Քո թախծոտ աչքերին նայելով...

Հայաստան

Քո կարկաչուն ծայնն ասես
Մեր աննման Արաքսն է հեզ,
Որ պահել է վիշտն իր
Միշտ բարձր ու վեհ:

Քո աննման հայացքը վեհ
Մեր Արարատ սուր սարն է գոռ,
Որ ծխում է խաղաղ ու լուռ
Հիրուխն իր համբերության...

Մայրս

Քո սրտի զարկից են ես ծնվել,
Քո աչքի լույսով են ես սնվել,
Քո քնքուշ ծայնով են ես քնել,
Փաղաքուշ ձեռքով օրորվել:

Ա-խ, ինչպես հագեցնամ մայրիկ
ասելով,
Միշտ համբուրելով ու զուգուրելով:
Դու մանուշակ ես ու բուրավետ ես,
Ծաղկած ծաղիկ ես, անուշահոտ ես,
Մայր իմ սիրելի՛, քաղցր ես ամենից:

Օֆելյա Մինասյան 5-րդ դաս.

Թոնրախաղ

Եկար, բարև, իմ քաղաքի մայրամուտ,
Լուռ ու հեզիկ, հարսնատես,
Փնտրտուքիդ այս վարանոտ,
Ինձ կարգել են քեզ լրտես:

Քո առաջին դող ու շնչից
Հիմա աստղեր կերկնես,
Մթության սև թթխմորից
Հրաշք գիշեր կհունցես:

Աչքս աստղիդ, ու թներս քեզ գրկաբաց,
Տես, ընդառաջ են գալիս,
Ձեփյուռածով ծոցիկդ բաց
Հուշերս որոնելիս:

Եկար, բարև, իմ քաղաքի լույս գիշեր,
Կնոջ նման հոգսաշաղախս ու հոգնած,
Բաց ձեռքդ ու ափդ լավաշե
Արևահամ կարմիր հացով այգաբաց:

Գլուխգործոց

Ես մի մոմն արձանիկ եմ,
Քանդակ մոմն ու փխրուն,
Ու թե քանի քարտաշ ունեմ,
Որ մոմի ճիչն են սիրում,
Խազմզում են կերպարիս մեջ,
Նուրբ ու անտաշ գծեր անվերջ,
Ուտքերս ուտք, ձեռքս փետուր,
Քայլերս լուռ, խոհերս հուր,
Ի՞նչ են անում, չեն հասկանում,
Իրար ձեռքից մուրճ գողանում,
Կոպիտ մուրճով մոմ են ջարդում
Եվ ուղեղիս միտք են բարդում:
Հեռու տարեք մուրճերը ձեր,
Ու էլի զարկ, էլի բծեր,
Թողեք մարմնիս ցավից հալվեմ
Աշտանակիս դանդաղ փարվեմ:

Ժամանակ

Հին երկրագունդ գուցե անդուլ,
Բայց և ժանգոտ ուղեծրով,
Բազմահնչյուն ճողոցով խուլ,
Քայլերովդ ցամաք ու ծով,
Պտտվում ես անշուք ու սին
Մեկ մտածված, մեկ մոլեգին,
Բարին հրում չարի հույսին,
Ամպագոռզոռ, աղերսագին:
Տնորածին աչքերդ բաց,
Ու տես ինչե՞ր ես արել,
Ու՞ն կեղծիքն ես գլորել ցած,
Կամ ուն ճիշտն ես արհամարհել,

Ես չեմ երգում հույս ու հավատ,
Ու չեմ պնդում, թե չկան,
Խորքից նեխած ամեն արմատ
Ի՞նչ ձևվածքի ծաղիկ կտա,
Ինչքան բարի ունես քնած,
Ցանիր, փռիր, պետք են հիմա,
Անարդարը սերմում խեղդած
Էլի սփռիր, թող շատանա:

Սկավառակ

Մեկ օր էլ մթնեց,
Երկիրը մեկ օր էլ դանդաղ պտտվեց,
Մեկ օր էլ արևը ծագեց ու մարեց,
Եվ պարոն կյանքը մեկ օր էլ ապրեց:
Մի թիթեռ ծնվեց, գուցե մահացավ,
Նրա ապրածն էլ պատմություն
դարձավ,
Մի աստղ ընկավ, մյուսն առկայծեց,
Երկնքում ամպը հոգնեց ու հալվեց,
Մի մանուկ ծնվեց, մի ծերուկ չկա,
Ու սովորական այս օրը վկա,
Որ կյանքը ընդմիջտ կհարատևի
Քանի դեռ անհայտ մի վաղը դեռ կա:
Արուսյակ Օհանյան

Առակներ

Աղվեսը կերավ
Չալ հավի մեկ ծուն:
- Որակն եմ փորձում,
Դիմեց նա հավին:
- Երբ քեզ էլ մարսեմ,
կարծիրս կասեմ:

Երբ արծիվ չկա
Երկնականարում
Ազոավն արքա է
Իրեն համարում:

Եթե չկա խոտ
Ու շատ խիստ սով է,
Ոչխարին պետք է,
Թե հովիվն ուլ է:

Որպեսզի չընկնես
Խուփ կամ արահետ,
Ճամփա մի ելիր
Ամեն մեկի հետ:

Շունը հաչելու
Առիթ է գտնում
Նույնիսկ երբ նրան
Շան տեղ չեն դնում:

Գոռում էր արջը,
Ապրում էր մեծ վիշտ
Լքում էր որջը,
Մեկնում էր ընդմիջտ
Նա գոռոռում էր
Ոչ թե իր ահից
Այլև անտառի
Վերահաս մահից:

Եթե հովիվը
Հովերում թիկնի
Պարզ չէ՞, ոչխարը
Մար ու ձոր կընկնի:

Մի շուն հաչելով
Ուզում էր նշել
Որ ինքն իսկապես
Տիրոջն է քաշել:
*Երևանի «Մխիթար Գոշ» միջազգային
համալսարանի Իջևանի «Տավուշ»
ինստիտուտի օտար լեզվի դասախոս
Էդվարդ Մարգսյան*

Վերջին զանգ

Դահլիճում տիրում է լռություն,
Հավաքվել է մեծ բազմություն,
Ամեն մեկը շունչը պահած
Նայում է անչափ հիացած:
Իմ եղբայր սիրելի,
Վերջին զանգը շնորհավոր,
Կյանքիդ մնացած օրերին
Ոտքդ չդիպչի քարին:
Հուզված եմ ես անչափ-անչափ,
Եղբորս սիրում եմ ամպի չափ:
Իմ աչքերը կհավատա՞ն,
Որ եղբայրս է շրջանավարտ:

Ամառ

Օրը տաքացավ,
Հաճելի դարձավ,
Ուռա՞ կանչեցեք,
Ամառը եկավ:

Հունիսի մեկը դարձյալ հյուր եկավ,
Երեխաները ծիծաղով մանկան
Գոռու՞մ-գոչու՞մ են
Ուռա՞, ամառը եկավ:

Փողոցը լցվեց ժիր մանկան ճիչով,
Ու բազու՞մ-բազու՞մ աղաղակներով:
Նրանք բոլորը գոչում են կարծես
Ուռա՞, ամառը հյուր եկավ մեզ:

Դարբինյան Նարինե 6-րդ դաս:

Կրթօջախի ամառային առօրյան

«Ավան կրթահամալիրը» կարծես մի գողտրիկ օազիս լինի ամառային ոսկեդեղձան արևի ճաճաչների ներքո: Ահա բակի կանաչազարդ բալեմինները, որոնց փարթամ սաղարթները օիրորդական ամոթխածությամբ շորորում են, իրար հետ շրշյունով փսփսում կարծես անցող-դարձողին պատմելով վարժարանի ծննդյան պատմությունը, անցած ուղին և այսօրվա հաստատուն ու անուր դիրքը:

Բայց ես ուզում եմ խոսել վարժարանի կենդանի առօրյայի մասին: Թվում է, թե դասերն ավարտել են, և կրթօջախում պետք է լռություն տիրի: Բայց ոչ, զրնգում են երգն ու պարը, մանկական ծափ-ծիծաղը, ամեն անկյունից լսվում են ուրախ ու կարկաչուն ծայներ: Այո, պարզվում է վարժարանում ճամբար է գործում: Ընորհալի դասվար Ռուզաննա Սարգսյանը հրաշալի է կազմակերպել երեխաների ամառային առօրյան: Ինքն էլ, մի երեխա դարձած, խաղում է նրանց հետ, թռչկոտում, կատակում, ուրախանում, հետո սկսում են մաթեմատիկան, խաղերը, հանելուկների ու ռեբուսների մեկնաբանումն ու լուծումը: Դետո նորից բակ. չէ՞ որ նրանց աչքով են անում և իրենց մոտ կանչում արդեն ալ կարմիրն դարձած և հյութեղ բալերը: Այո, վարժարանում ամեն ինչ երեխաների համար է: Նրանց արևավառ այտերը, կայծկլտուն աչիկները, բարկ արևից սևացած մարմինները ասում են այն մասին, որ կրթօջախի սաները իրենց հիանալի են զգում: Ճիշտ է, ճամբարային կյանքը հետաքրքրություն է մտցրել վարժարանի ամառային կյանքի մեջ, բայց կրթօջախը միայն դրանով չի բավարարվում: Երկրորդ հարկում անսովոր լռություն է, կարծես դաս է: Ճիշտ է, զանգի դողանքները չեն ազդարարում դասամիջոց կամ դասի կանոչում, բայց դասասենյակներում հնչում են ուսուցիչների հստակ և ուսուցանող ծայները:

Այո, «Ավան» դպրոց վարժարանը ի հանգստանում նույնիսկ ամռանը: Ահա հայոց և անգլերեն լեզվի, մաթեմատիկայի ուսուցչուհիները, որոնք անվճար պարապում են թույլ, հետ մնացող երե-



խաների հետ, որպեսզի սեպտեմբերի մեկին պատվով նստեն լավ սովորողների կողքին:

Սպասեք, միջանցքի մյուս ծայրում ինչ-որ շարժում կա: Մոտենում ենք: Մի խումբ աշակերտներ իրենց պարտքն են համարել ամառվա տապին զալ վարժարան և խնամել ծաղիկները: Այնքան նուրբ են նրանք այդ աշխատանքը կատարում, այնքան զգույշ են մոտենում ծաղիկներին, պոկում դեղնած թերթիկները, ծաղկամանները շրջում դեպի արևը, հետո փոքրիկ գույլով ջրում: Զէ՛ որ ծաղիկները կենդանի եակներ են: Երեխաների հեռանալուց հետո կարծես նրանք սիրո ու երախտագիտության խոսքեր են շնջում...

Իսկ վարժարանի միջանցքների սրահներում ծաղիկները շա տ-շա տ են դեղին, կարմիր, կապույտ ծաղիկներով ու նռան փոքրիկ գլխիկով:

Իսկ որ շախմատը պարտադիր մտել է վարժարանի սաների ամենօրյա առօրյայի մեջ, դա արդեն փաստ է: Ընկեր Դավիթը եթե ուզենա էլ, չի կարող տանը մնա: Երեխաները նսրում սենյակում և սկսում են ինքնուրույն խաղը: Նրանք այնքան են տարվում խաղով, որ չեն նկատում մարզիչին: Երբ պայքարը մտնում է կարված վիճակի մեջ, և լարվում է նաև Դավիթը, երեխաներընոր միայն նկատում են սիրելի ուսուցչին ու ավելի համարձակ շարունակում մրցապայքարը:

Նախորդ համարի գլուխկոտրուկների պատասխանները.

1. Լենինական
2. Ո՞ր բևեռն է ցուրտ, հյուսիսային՞ն, թե՞ հարավային:
Պատասխան- Երկու բևեռն էլ Արեգակից լույս ու ջերմություն ստանում են հավասար չափով, բայց հարավային բևեռն ընկած է ցամաքի վրա, պատած սառցե հաստ շերտով, իսկ հյուսիսայինը օվկիանոսի մեջ, որի վրա ազդում է օվկիանոսային տաք հոսանքը, հետևաբար հյուսիսային բևեռն ավելի տաք է, քան հարավայինը:
3. Ռոստով-Ռոստով, Էլբա-Էմբա, Ամուր-Ադուր(գետ Ֆրանսիայի հարավ- արևմուտքում), Ադլեր-Ալլեր(գետ արևմտյան Գերմանիայում), Անգարա-Անկարա, Ուրալ-Արալ, Առնո(գետ Իտալիայում)-Բռնո(քաղաք Չեխոսլովակիայում), Իրան-Իրաք, Լենա-Սենա, Նևա-Նիվա, Չադ-Չուդ, Դվինա-Շվինա (գետ Կարելիայում), Սուդան-Սուդակ, Իսլանդիա-Իռլանդիա, Ջոնդ(ճապան և Սումատրան բաժանող նեղուց)-Ջոնդ (Նեղուց Եվրոպայի հյուսիսում), Նիոն(բնակավայր Ֆրանսիայի հարավում)-Լիոն:
4. Եղվարդ, Արարատ, Իջևան, Լալվար, Օշական, Սիսիան:
5. Երկրագնդի 5-րդ օվկիանոսը ատմոսֆերան է երկրի օդային թաղանթը: Գիտնականները գտել են 6-րդ պլազմայի օվկիանոս, որը գտնվում է երկրագնդից 2-3 հազար կիլոմետր բարձր:
6. 1. Արկ, 2. Դոն, 3. Սար=Կրասնոդար
7. Գնարավոր է: Ամռանը հյուսիսային բևեռում արևը երևում է մոտ 6 ամիս շարունակ ասնց մայր մտնելու: Դետևաբար, ամիսների ընթացքում լինում է միայն մի արևածագ:
8. Սուդակ:

«Կարողանու՞ն եք երջանիկ լինել» թեստի արդյունքները.

Ամեն անգամ ա. տարբերակն ընտրելիս միավոր չեք ստանում, ք. տարբերակի համար տրվում է մեկ միավոր, գ. կարբերակի դեպքում երկու միավոր:

17-20 միավոր: Դուք այնքան երջանիկ մարդ եք, որ պարզապես մարդու հավատ չի գալիս, թե դա հնարավոր է: Ուրախանում եք կյանքով, ուշադրություն չեք դարձնում անախորժություններին: Դուք կենսախիճ մարդ եք, շրջապատողներին դուր եք գալիս լավատեսությամբ, բայց... մակերեսային և թեթևամիտ չե՞՞ծեր վերաբերմունքը: Գուցե մի փոքր զգաստությունը ձեզ չի՞ խանգարի:

13-16 միավոր: Երևի դուք լազույնս երջանիկ մարդ եք, և ուրախությունը ձեր կյանքում ավելի շատ է, քան տխրությունը: Դուք բարի եք, սառնասիրտ, զգաստ ուղեղ և և ոչ դժվարահաճ բնավորություն ունեք: Դժվարությունների հանդիպելիս խուսափ չեք մատնվում, դրանց զգաստ գնահատական եք տալիս: Շրջապատողների հասանք ձեզ հետ հեշտ է:

8-12 միավոր: Երջանկությունը և դժբախտությունը ձեր կյանքում չափվում են «50 x 50» հայտնի բանաձևով: Եթե ցանկանում եք կշեռքի նժարը իջեցնել ձեր օգտին, ապա ձգտեք չնահանջել հանդիպած դժվարության առջև, այն դիմավորեք ստոիկաբար, անհողդողդ ձևով, անելի հաճախ հենվեք ընկերների վրա:

0-7 միավոր: Դուք սովորել եք ամեն ինչին նաել սև անոցների միջով: Դամարում եք, որ ճակատագիրը ձեզ բաժին է հանել բախտը չբերողի վիճակը: Ձգտեք ավելի շատ ժամանակ անցկացնել ուրախ, լավատեսորեն տրամադրված մարդկանց շրջապատում: Լավ կլիներ որևէ բանով հրապուրվել, գտնել հոբբի: